Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը մեծապես կարևորեց փարբեր ոլորտներում Ռոստովի մարզի հետ Հայաստանի համագործակցությունը՝ վստահություն հայտնելով, որ այն պիտի առավել ամրապնդի երկու ժողովուրդների դարավոր կապերը և եղբայրությունը: Անդրադառնալով 2008 թ. Ռոստովի մարզ կատարած Հովվապետական իր այցին՝ Ամենայն Հայոց Հայրապետը գնահատանք հայտնեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին և ի մասնավորի Ռոստովի մարզի նահանգապետին՝ մարզում հաստատված հայորդիների և Հայ Եկեղեցու նկատմամբ մշտապես ցուցաբերվող բարյացակամ և հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին Ռոստովի նահանգապետը շնորհակալություն հայտնեց հայոց հոգևոր կենտրոն այցելելու հնարավորության և ջերմ ընդունելության համար: Պարոն Գոլուբևը Նորին Սրբությանը ներկայացրեց իր այցի արդյունքները և նախանշված համագործակցությունը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ եկեղեցիների ջերմ հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Նոյեմբերի 13-14-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողով ընդլայնված կազմով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներն աղոթեցին խորհրդի հանգուցյալ անդամ Ռաֆայել Պապայանի հոգու հանգստության համար: Մինչ օրակարգին անցնելը ժողովականներին ողջունեց և իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը: Ժողովի օրակարգում ընդգրկված էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրապետական Աթոռներին, թեմերին և միջեկեղեցական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր:

Օրակարգի հաստատումից հետո Խաժակ Սրբազանը զեկույց ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կանոնական հանձնախմբի աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ժողովականներին տեղեկացվեց նաև Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում նոյեմբերի 15-18-ը գումարվելիք միաբանական ժողովի մասին: Գերագույն հոգևոր խորհուրդը ողջունեց միաբանական ժողովի գումարումը՝ կարևոր նկատելով Երուսաղեմի Հայոց

Պատրիարքությանը հուզող խնդիրների հաղթահարումը համոն պատմական Ս. Աթոռի առաքելության առավել արդյունավետ իրագործման:

Այնուհետեւ Ֆրանսիայի Հայոց թեմի եւ Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակությանն առնչվող հարցերը ներկայացրեց Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը: Սրբազան Հայրը զեկուցեց նաեւ Բենելյուքս երկրներում եկեղեցական կառույցների ձեւավորման ընթացքի մասին: Գոհունակությամբ ի գիտություն ընդունելով զեկույցը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորեց շարունակել աշխատանքները:

Ժողովի ընթացքում քննության առնվեց Շվեցարիայում թեմական կյանքի վերակազմակերպման խնդիրը: Տեղեկացվեց, որ առաջիկայում Սյունյաց եւ Տավուշի փոխառաջնորդություններում կձեւավորվեն թեմական կառույցներ:

Նոյեմբերի երկրորդ կեսին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարելիք Հովվապետական այցի առնչությամբ լուսաբանություններ տվեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Տեղեկացվեց, որ նկատի առնելով Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Երկրորդի արտասահմանում բուժումից հետո վերականգնողական շրջանի անհրաժեշտությունը եւ պատրիարքի ցանկությունը՝ ուղեկցելու Նորին Սրբությանը Թբիլիսի եւ Ջավախք միջեկեղեցական եւ հովվապետական այցելության ողջ ընթացքում՝ Վրաց Եկեղեցին դիմել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերանայելու Հայոց Հայրապետի Վրաստան այցի թվականը: Գերագույն հոգեւոր խորհրդն ընդառաջ խնդրանքին հետաձգեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Վրաստան՝ նկատի ունենալով հետաձգման վերաբերյալ նաեւ Վիրահայոց թեմի եւ Ջավախքի փոխառաջնորդության խնդրանքը:

Օրակարգում անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանի Հանրապետությունում ամուսնալուծությունների եւ ժողովրդագրական աճի խնդիրներին: Այս առնչությամբ Գերագույն հոգեւոր խորհուրդը մտահոգություն արտահայտեց, ինչպես նաեւ քննարկեց այն ուղիները, որոնց միջոցով Հայոց Եկեղեցին կարող է նպաստել այդ խնդիրների հաղթահարմանը:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Կուխտային:

Նորին Սրբությունը շնորհավորեց նորանշանակ դեսպանին Հայաստան դիվանագիտական ծառայության գործուղվելու առիթով եւ բարի արդյունավորում մաղթեց նրա առաքելությանը: